«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) միջազգայնացման սույն հայեցակարգի (այսուհետ՝ Հայեցակարգ) իրավական հիմքը կազմում են Համալսարանի կանոնադրությունը, «2023-2027թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը», Էրազմուս+ «Համալսարանների միջազգայնացման ռազմավարության և մարքետինգի խթանումը Հայաստանում»-BOOST ծրագրի շրջանակներում մշակված «ՀՀ բարձրագույն կրթության միջազգայնացման ռազմավարությունը», ինչպես նաև այլ ներքին իրավական ակտեր:

Հայեցակարգը սահմանում է Համալսարանի գործունեության հիմնական ոլորտների՝ կրթական ծառայությունների մատուցման, գիտահետազոտական գործունեության, հանրային ներգրավման, ինչպես նաև կառավարման համակարգի միջազգայնացման հայեցակարգային մոտեցումները, նպատակներն ու խնդիրները, դրանց լուծմանն ուղղված հիմնական գործողությունները:

Հայաստանի Հանրապետության բուհական համակարգի միջազգայնացումը ժամանակի պահանջներին համահունչ բարձրորակ մասնագետների պատրաստման և հետազոտության զարգացման ու վերջինիս առևտրայնացման կարևոր նախապայմաններից է: Բոլոնիայի գործընթացին միանալուց հետո ՀՀ բուհական համակարգում կատարվել են կառուցվածքային ու բովանդակային մի շարք բարեփոխումներ, որոնք ձևավորել են բարենպաստ պայմաններ բարձրագույն կրթության ազգային համակարգի համադրելիության, որակի ապահովման, որակավորումների փոխճանաչման, ակադեմիական շարժունության խթանման համար: Այս համատեքստում առաջնահերթություններից մեկն էլ դառնում է միջազգայնորեն մրցունակ կրթական ու հետազոտական միջավայրի ապառվումը: Ինչպես «ՀՀ բարձրագույն կրթության միջազգայնացման ռազմավարության» մեջ էլ նշվում է. «...առաջնահերթ կարևորություն են ստանում դասավանդման և հետազոտության որակի բարելավումը, միջազգային գործընկերությունների ստեղծումը և բուհերի միջազգային տեսանելիության բարձրացումը: Հիմնականում ուսանողների և դասախոսների փոխանակման ծրագրերի միջոցով բուհերի միջազգայնացման նախկին միտումներին եկել են փոխարինելու

կրթության միջազգայնացման ռազմավարական դիրքորոշումները՝ օտարերկրյա ուսանողների և դասախոսների փորձի ներգրավման, ուսումնառության և դասավանդման գործընթացներում միջազգային չափայնության ներդրման և համալսարանական ռազմավարության ձևավորման ուղղությամբ: Հայկական Սփյուռքի մասնագիտական ներուժը ևս դրական նախադրյալներ է ստեղծում բարձրագույն կրթության միջազգայնացման, գլոբալ գործընկերությունների ստեղծման և երկրի միջազգային տեսանելիության բարձրացման համար»:

ՇՊՀ-ի ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Նկատի ունենալով վերը նշված իրավիճակը, ինչպես նաև առաջնորդվելով ՇՊՀ-ի կանոնադրությամբ ու 2023-2027թթ. զարգացման ռազմավարական ծրագրով՝ սույն Հայեցակարգում առանձնացվել են բուհի միջազգայնացմանն առնչվող հետևյալ հիմնական նպատակները.

1. Ձևավորել և զարգացնել կրթական գործունեության միջազգայնացումը խթանող միջավայր:
2. Ձևավորել և զարգացնել գիտահետազոտական գործունեության միջազգայնացումը խթանող միջավայր:
3. Խթանել Համալսարանի գործունեության բոլոր ոլորտների հասարակական պատասխանատվությունը, միջազգային տեսանելիությունն ու գրավչությունը:

ՇՊՀ-ի ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Վերոնշյալ նպատակներին հասնելու համար առանձնացվել են հետևյալ հիմնական խնդիրները.

1. **ՆՊԱՏԱԿ 1 - Ձևավորել և զարգացնել կրթական գործունեության միջազգայնացումը խթանող միջավայր:**

1.1 Գործընկեր բուհերի հետ կազմակերպել և իրականացնել համատեղ կրթական մոդուլների և/կամ ծրագրերի դասավանդում:

1.2 Ապահովել «բարձրագույն կրթություն-հետազոտություն-նորարարություն» եռանկյունու ձևավորումն ու հետագա զարգացումը:

1.3 Ընդլայնել և բազմազանեցնել կիրառական նշանակություն ունեցող հետազոտությունների ոլորտները՝ առանձնակի ուշադրություն դարձնելով դրանց վերջնարդյունքներն ուսումնական գործընթացում ներդնելու աշխատանքներին:

1.4 Ընդլայնել, ավելացնել ու խթանել ՊԴ և վարչական կազմերի, ուսանողների մասնակցությունը փորձի փոխանակման, մասնագիտական

զարգացման, ինչպես նաև կարճաժամկետ ու երկարաժամկետ շարժունության ծրագրերում:

1.5 Հստակեցնել ռազմավարական նշանակություն ունեցող տարածաշրջաններն ու երկրները և ծավալել համակարգված կրթական համագործակցություն:

1.6 Նպաստել միջազգային մակարդակում գիտելիքի և փորձի փոխանակմանը, միջմշակութային երկխոսության հետագա ակտիվացմանը, Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին ինտեգրմանը:

1.7 Կազմակերպել և անցկացնել վերապատրաստումներ որակավորումների և կրեդիտների փոխճանաչման գործընթացների վերաբերյալ:

1.8 Ներդնել օտար լեզուների իմացությունն ապահովող և խրախուսող համակարգ:

1.9 Առաջարկել օտարերկրյա և Սփյուռքի հայ համայնքի ուսանողներին հայոց լեզվի ուսուցման լրացուցիչ դասընթացներ:

2. ՆՊԱՏԱԿ 2 – Զնավորել և զարգացնել գիտահետազոտական գործունեության միջազգայնացումը խթանող միջավայր:

2.1 Գործընկեր բուհերի և գիտահետազոտական կազմակերպությունների հետ կազմակերպել և իրականացնել համատեղ գիտահետազոտական աշխատանքներ:

2.2 Կազմակերպել և անցկացնել միջազգային գիտաժողովներ, ամառային դպրոցներ, գիտագործնական սեմինար-քննարկումներ:

2.3 Խրախուսել միջազգային վարկանիշային ամսագրերում հոդվածների հրապարակումը:

2.4 Ընդլայնել և բազմազանեցնել կիրառական նշանակություն ունեցող հետազոտությունների ոլորտները՝ առանձնակի ուշադրություն դարձնելով դրանց վերջնարդյունքներն ուսումնական գործընթացում ներդնելու աշխատանքներին:

2.5 Ապահովել առավելագույն ներդաշնակեցում հետազոտական կրթական ծրագրի ու եվրոպական գործընկեր բուհերի կողմից իրականացվող դոկտորական ծրագրերի միջև:

2.6 Հստակեցնել ռազմավարական նշանակություն ունեցող տարածաշրջաններն ու երկրները և ծավալել համակարգված գիտական համագործակցություն:

2.7 Նպաստել միջազգային մակարդակում գիտելիքի և փորձի փոխանակմանը, միջմշակութային երկխոսության հետագա ակտիվացմանը, Եվրոպական հետազոտական տարածքին ինտեգրմանը:

2.8 Կազմակերպել և անցկացնել վերապատրաստումներ գիտական աստիճանների փոխճանաչման գործընթացների վերաբերյալ:

2.9 Ապահովել «բարձրագույն կրթություն-հետազոտություն-նորարարություն» եռանկյունու ձևավորումն ու հետագա զարգացումը:

3. ՆՊԱՏԱԿ 3 - Խթանել Համալսարանի գործունեության բոլոր ոլորտների հասարակական պատասխանատվությունը, միջազգային տեսանելիությունն ու գրավչությունը:

3.1 Մշակել և ներդնել սույն Հայեցակարգի իրականացման ժամանակացույց, մշտադիտարկման ու գնահատման ցուցիչներ:

3.2 Ստեղծել տեղական և միջազգային համագործակցության ծրագրերին մասնակցած աշխատակիցների, ուսանողների տեղեկատվական բազա, ինչպես նաև մշակել և ներդնել հագործակցության արդյունքների և ազդեցության գնահատման ու արժևորման համակարգ:

3.3 Ուղղորդել Համալսարանի միջազգայնացումը երկրի/Շիրակի մարզի զարգացման համար գերակա նշանակություն ունեցող ոլորտներ:

3.4 Ընդլայնել մարքեթինգային հաղորդակցման բազմազան գործիքների (տեսահոլովակներ, ցուցահանդեսներ, գովազդ և այլն) օգտագործումը:

3.5 Ապահովել Համալսարանի ներգրավումը միջազգային վարկանիշային համակարգերում:

3.6 Ներգրավել այլ երկրներում բնակվող՝ ՇՊՀ-ի շրջանավարտների, Սփյուռքի ներկայացուցիչների ներուժը կրթության և գիտահետազոտական աշխատանքների միջազգայնացման գործընթացում:

3.7 Ներդնել ՇՊՀ-ի շրջանավարտների հետ կապի հաստատման ու պահպանման մեխանիզմներ, ուսումնասիրել այդ ոլոտրտում ունեցած արտասահմանյան գործընկերների փորձն ու մշակույթը;

3.8 Ընդլայնել ու բազմազանեցնել արտաքին համագործակցության շրջանակները՝ որպես ՇՊՀ դեսպաններ ներգրավելով միջազգային համագործակցության ծրագրերով ՇՊՀ-ում իրենց դասախոսական, հետազոտական աշխատանքներն իրականացրած աշխատակիցներին, ինչպես նաև ուսումնառությունը շարունակած ուսանողներին:

3.9 Խրախուսել բուհի կառավարման խորհուրդներում, որպես հրավիրյալ դասախոս, մասնագիտական հաջողություններ գրանցած օտարազգի և սփյուռքահայ մասնագետների ներգրավումը:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն Հայեցակարգը, վերջինիս մեջ առաջարկվող փոփոխությունները և լրացումները հաստատում է Համալսարանի գիտական խորհուրդը:

4.2 Սույն Հայեցակարգն ուժի մեջ է մտնում հաստատման օրվանից: